5561

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«27» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 150 - 25

Նախաձեռնող՝ ***«ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ***
ք. Երևան, Հյուսիսային պողոտա 8/20

Գործունեությունը՝ ***Չկալովկա և Նորաշեն բնակավայրերի ափամերձ հատվածում հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցում***
Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք

Առդիր՝ 10 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 150-25

«27» Սեպտեմբեր **2025թ.**

Գեղարքունիք մարզի Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրերի հարող հողատարածքներում հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈԼԴԻՆԳՍ » ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիք մարզի Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրեր

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ գործունեությունն իրականացվելու է Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրերի, «Սևան» ազգային պարկի և հարող ափամերձ տարածքներում՝ մասնավորապես՝ Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի՝ գյուղ Նորաշեն՝ Սևան Գավառ ճանապարհ 11 կմ 1 հողամաս (ծածկագիրը՝ 05-070-2011-0035), գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 9/1 (ծածկագիրը՝ 05-075-0147-0011), գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 9 (ծածկագիրը՝05-075-0147-0013), գյուղ Չկալովկա 12-րդ փողոց, Սևան-Գավառ խճուղի, 9-րդ կմ թիվ 67/2 (ծածկագիրը՝ 05-075-0147-0017), Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա Սևան-Գավառ խճուղի 67/3 (ծածկագիրը՝ 05-075-0147-0032), գյուղ Չկալովկա 12-րդ փողոց, Սևան-Գավառ խճուղի 6-րդ նրբանցք 9 հողամաս (ծածկագիրը՝ 05-075-0147-0012), գյուղ Նորաշեն Սևան-Գավառ ճանապարհ Նորաշենի և Չկալովկայի սահմանին լճի ափ 11 կմ (ծածկագիրը՝ 05-070-2011-0012), գյուղ Չկալովկա 12-րդ փողոց 6-րդ նրբանցք 7 (ծածկագիրը՝ 05-075-0147-0025), գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 5, 5/1, 7, 3/1, 3 հողամաս (ծածկագիրը՝ 05-075-0147-0034), գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 28, 30, 24, 22/1, 26 հողամաս (ծածկագրերը՝ 05-075-0142-0130, 05-075-0142-0131), հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված և բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտիներում:

Կառուցապատման համար հիմք է հանդիսացել՝ «ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊ ընկերությանը կառուցապատման իրավունքով տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման՝

N 24082022-05-0007, N 23082022-05-0066, N 24082022-05-0009, N 24082022-05-0008, N 08072019-05-2023, N 18092018-05-0040, N 18092018-05-0038, N 13092022-05-0036 վկայականները:

Ընկերությանը սեփականության իրավունքով տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման

_ N 23082022-05-0069, N 24082022-05-0004 վկայականները,

_ համայնքի գլխավոր հատակագիծը, Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտիավորման նախագիծը,

_Սևան համայնքի կողմից 03.04.2023թ տրված N 25 նախագծման թույլտվությունը:

Նախատեսվող գործունեության ընդհանուր մակերեսը կազմում է 31.80հա, որից սեփականության իրավունքով՝ 28,1653 հա, կառուցապատման իրավունքով՝ 3.64185 հա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող կառուցապատման հիմքում դրված է լանդշաֆտի առավելագույն պահպանման և ներդաշնակ միջավայրի ձևավորման սկզբունքը, ինչի արդյունքում ստեղծվելու են զբոսաշրջության զարգացման և միաժամանակ բնության պահպանության համար անհրաժեշտ նախապայմաններ: Տարածքում ընտրված տարբեր կետերից լայն տեսարաններ են բացվում դեպի Սևանա լիճը և թերակղզին:

Նկարագրական մաս. Նախագծով ներկայացված է 161 տարբեր դասերի համարներով հյուրանոցային համալիրի և կոնֆերանս կենտրոնի կառուցում: Ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 25878.63 քմ է , հյուրանոցի մակերեսը կազմում է 7321.52 քմ, Այն իրենից ներկայացնում է 127.8x57.05x20.65(h)մ հարաչափերով շինություն, որը Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի կողմից 4 հարկանի է՝ ներառյալ ձեղնահարկը, իսկ դեպի Սևանա լիճ, հաշվի առնելով ռելիեֆի առանձնահատկությունները՝ նվազելու է աստիճանաձև՝ դառնալով մեկ հարկ: Շենքն ունենալու է ներքին ատրիում բակ, որի վերևի և դեպի լիճ նայող հատվածները փակված են լինելու ապակե վիտրաժներով: Շենքում նախատեսվում են հանգստի և ժամանցի սպասարկման համար տարածքներ, այդ թվում՝ առևտրի տաղավարներ, 400 նստատեղով ռեստորան, ֆիթնես սրահ, բոուլինգի սրահ, դեպի լիճ դուրս եկող տեռասային բացօթյա բար-սրճարաններ, փակ լողավազան, շոգեբաղնիքներ, մերսման սրահ, մարզասենյակներ՝ հանդերձարաններով, սանհանգույցներով և ցնցուղարաններով: Փակ լողավազանին կից նախատեսված է նաև բար-սրճարանով երկհարկ սպասասրահ, իսկ լողավազանի ներքևում տեղադրվելու են վերջինիս սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական սենյակները: Նույն հարկում տեղադրվելու են նաև քողարկված տնտեսական մուտքերը, որտեղից էլ կատարվելու է շենքի հիմնական տնտեսական սպասարկումը: Կիսանկուղային և ստորգետնյա հարկերը անհրաժեշտության դեպքում կարող են

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

օգտագործվել որպես թաքստոցներ: Նախատեսված են նաև սպասարկող անձնակազմի համար սանհանգույցներ և օժանդակ սենյակներ: Հյուրանոցային համալիրը տեղադրված է լինելու 1905.0 բացարձակ նիշից բարձր (հյուրանոցային համալիրի ամենացածր նիշն է՝ 1907.40-ը)՝ մայրուղային ավտոճանապարհից էլ գրեթե 27.0 մ հեռավորության վրա, որը բաժանվում է կանաչ գոտիով: Կոնֆերանս կենտրոնի շենքը զբաղեցնում է 2346.4 քմ մակերեսով տարածք: Այն իրենից ներկայացնում է 6900 քմ ընդհանուր մակերեսով, երկհարկանի (լճի կողմից եռահարկ), 35.9x77.0x13.7(h)մ հարաչափերով կառույց: Շենքում նախատեսված են՝ միջոցառումների և խորհրդակցությունների սրահներ, ցուցասրահներ, գիշերային ակումբ (ձայնամեկուսացումով, և չթափանցող վարագույրներով), երաժշտական սրահ, ռեստորաններ, բացօդյա սրճարաններ, ժամանցի համար նախատեսված այլ տարածքներ և ստորգետնյա պահեստ, որը անհրաժեշտության դեպքում նույնպես կարող է օգտագործվել որպես թաքստոց:

Շենքը նույնպես տեղադրված է լինելու 1905.0 բացարձակ նիշից բարձր (կոնֆերանս կենտրոնի ամենացածր նիշն է՝ 1907.64-ը):

Դեպի հանգստի գոտի մուտքը և ելքը նախատեսված է իրականացնել երկրորդական ճանապարհից: Ներքին ճանապարհային մոտեցումները իրականացվել են՝ հաշվի առնելով տեղանքի ռելիեֆի և լանդշաֆտի առանձնահատկությունները՝ միաժամանակ ապահովելով հյուրանոցի, բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի ու հետագա փուլերում կառուցվելիք քոթեջային թաղամասերի սպասարկման համար օպտիմալ հասանելիությունը:

1905.0 բացարձակ նիշից ներքև ընկած բոլոր տարածքները նախատեսված են որպես լողափային գոտիներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմելու է մոտ 10000 քմ: Կանաչ գոտիների ընդհանուր մակերեսը մոտ 24390 քմ, ինչը կազմում է ընդհանուր մակերեսի մոտ 76,68 %-ը: Կանաչ գոտիների մեծ մասը նախատեսվում է թողնել իրենց բնական անփոփոխ լանդշաֆտի տեսքով, որոշ հատվածներ բարեկարգվելու են: Ոռոգման սեզոնին ըստ անհրաժեշտության կօգտագործվի մաքրման կայանից դուրս եկող ջուրը՝ 1905մ նիշից բարձր գտնվող կանաչ տարածքների ոռոգման նպատակով:

Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի աջ կողմում ընկած սեփական հողատարածում կառուցվելու է խմելու ջրի մատակարարման և հակահրդեհային անվտանգության համակարգի գործունեության համար նախատեսված թվով 2 ջրամբարներ, իսկ ձախ կողմում տեղադրվելու է նորմատիվ պահանջներին համապատասխան հզորությամբ կոյուղաջրերի մաքրման ժամանակակից կայան:

Հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի էլեկտրասնուցման ենթակայանի, ջեռուցման և սառեցման համակարգերի, ջրամատակարարման պոմպակայանների համար նախատեսված շինությունները տեղադրվելու են Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի ձախ կողմում, ենթակառուցվածքների համար առանձնացված մեկ ընդհանուր տարածքում:

Ողջ կառուցապատումը նախատեսված է թույլատրելի 1905.0 հորիզոնական նիշից բարձր տեղադիրքերի վրա:

Կոյուղու մաքրման կայան. Մաքրման կայանը ծառայելու է հյուրանոցային համալիրին (ներառյալ նրա կազմում ընդգրկված ֆուդ քորտին) և կոնֆերանս կենտրոնին: Կայանի նախատեսված 270 խմ հզորությունը վերը նշված կառույցների

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

այցելուների սպասարկման համար պահանջվող ջրաքանակի հաշվարկից ավել է նախատեսվել, որպեսզի ապահովվի կայանի առանց սահմանային ծանրաբեռնվածությամբ աշխատանքը: Ջրի ծախսի հաշվարկի համաձայն 270 խմ տարողության կոյուղու մաքրման կայանը բաժանված է լինելու 3 հավասար մոդուլների: Յուրաքանչյուր մասը՝ մոդուլը օրեկան 90 խմ կեղտաջրի մաքրման հնարավորություն ունի: Եթե 3 մոդուլներից 1 մոդուլը ըստ պահանջի չօգտագործվի, ապա մյուս մոդուլները մինչև վթարված մասի նորոգումը կարող են օրեկան մինչև 182 խմ կեղտաջուր մաքրել: Ամեն մի մոդուլ իրենից ներկայացնում է 3 մասից բաղկացած գործարանային արտադրության պլաստմասե «պոլիպրոպիլեն» շիթերից պատրաստված կոմպլեկտ կառույց: Մաքրման կայանը նախատեսվում է տեղադրել ստորգետնյա բետոնե կառույցի մեջ, որտեղ նաև տեղադրվելու են օդամղիչները:

Կայանի մարմինը լիովին ջրամեկուսացած է լինելու և ունենալու է կափարիչներ: Այս ամենը նպաստելու է կայանի կայուն աշխատանքին ամբողջ տարվա ընթացում՝ անկախ կլիմայական պայմաններից: Թթվածինը դեպի կայան մղվելու է օդամղիչների միջոցով, որոնք ապահովելու են միջինում մինչև 30°C ջերմաստիճանի բարձրացում, ինչը հնարավոր է դարձնելու կենսաբանական արդյունավետ մաքրումը նույնիսկ ձմեռվա ցուրտ ամիսներին: Սեզոնայնության և հոսքի տատանումների գործոնը հաշվի առնելով՝ կայանը նախատեսվում է 3 զուգահեռ գծերով, մինչ այդ տեղադրվելու է կեղտաջրերի բաշխման հանգույց, որի միջոցով, ըստ անհրաժեշտության, հնարավոր կլինի կարգավորել հոսքը դեպի յուրաքանչյուր գիծ: Կեղտաջրերի առավելագույն հոսքերի պարագայում կայանի ընդհանուր ծանրաբեռնվածությունը նախատեսվում է 80%, ինչի շնորհիվ հնարավոր է չեզոքացնել անկանխատեսելի տատանումները, ինչպես նաև գծերից մեկի սպասարկման անհրաժեշտության պարագայում փակել մուտքը դեպի տվյալ գիծ: Մուտքային կեղտաջրերում աղտոտիչների հարաբերակցության ապահովման նպատակով կայանի յուրաքանչյուր գիծ ունի համասեռման փուլ, բացի դրանից կայանի կառուցվածքի և յուրահատուկ բիոֆիլտրերի շնորհիվ բացառվում է չմշակված կեղտաջրի ելքը կայանից, ինչը ապահովում է ելքում կայուն կենսաբանական և քիմիական ցուցանիշներ՝ կենցաղային կեղտաջրի փոքր շեղումների պարագայում:

Մաքրման առաջին՝ համասեռացման փուլում կատարվում է սկզբնական ախրացիոն և քայքայման ավելի երկար ժամկետ պահանջվող օրգանական նյութերի մարսում:

Հաջորդը՝ ախրացիոն փուլն է, որտեղ կատարվելու է կենսաբանական մաքրում, ԹԿՊ և ԹՔՊ-ի նվազեցում մինչև 95%՝ օգտագործելով միկրոպղպջակներ և բիոֆիլտրեր, վերջինները ունեն հիդրավլիկական և կենսաբանական հարվածների նկատմամբ մեծ առավելություն՝ դիմադրություն: Այս փուլում կատարվելու է նաև չնչին քանակությամբ տիղմի ավելացում:

Հաջորդը՝ տիղմի նստեցման փուլն է, որտեղ տիղմը նստում է, ջուրը առանձնանում է և անցնում հաջորդ փուլ, իսկ տիղմը վերադառնում է նախկին փուլ: Պարզեցված ջուրը ինքնահոս կերպով անցնելու է ավազի ֆիլտրի միջով, որը բաղկացած է լինելու մինչև 100 միկրոմետր խոշորություն ունեցող 3 տարբեր շերտերից: Կախված մասնիկները առանձնացվում են և վարակազերծվելուց հետո ջուրը համաձայն ՇՄԱԳ-ի ուղղվելու է դրենաժային հոր կամ դրա մի մասը ոռոգման սեզոնին ըստ անհրաժեշտության օգտագործվելու է 1905մ նիշից բարձր գտնվող կանաչ

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

տարածքների ոռոգման նպատակով:

Օդը մատակարարվելու է օդամղիչի միջոցով, որը տեղադրվելու է կամ կայանի մաս կազմող տեխնիկական հատվածում կամ կայանի հարևանությամբ՝ կախված տեղադրման վայրից: Օդամղիչի սենյակը ապահոված է լինելու անընդհատ օդափոխությամբ: Կայանի կարգավորված աշխատանքի պարագայում հոտը բացակայելու է, որովհետև այնտեղ տեղի են ունենալու աէրոբ գործընթացներ: Օդամղիչը տեղադրվելու է առանձին փակ տարածքում, ուստի կայանի աշխատանքը գրեթե անձայն է լինելու:

Կայանը բնական կերպով հասնում է արդյունավետության առավելագույն մակարդակի շահագործման հանձնելուց հետո 1 – 3 ամիսների ընթացքում՝ կախված տարվա եղանակից և մի շարք այլ գործոններից: Սույն գործընթացը հնարավորինս արագացնելու նպատակով շահագործման ժամական կայան են լցվում հատուկ նախատեսված միկրոօրգանիզմներ: Առաջին «թույլ» տիղմը կայանում հայտնվում է աշխատանքի 10-րդ օրը, լինում է բաց շագանակագույն, աստիճանաբար մաքրումը իրականացվում է ավելի բարձր որակով, իսկ ակտիվ տիղմը դառնում է մուգ շագանակագույն և խիտ: Լավ աշխատող կայանի ելքում ստացվելու է պարզված ջուր, առանց որևէ հոտի: Մինչ տիղմի օպտիմալ մակարդակի հասնելը ակտիվացիոն հատվածում նկատելի է լինելու ջրում փրփուրների առաջացումը: Դրա պատճառ է հանդիսանում լվացող միջոցների կենցաղում օգտագործումը : Փրփուրը սպիտակ է և ակտիվ տիղմի խտության ավելացմանը զուգահեռ չեզոքացվում է:

Կայանի լիարժեք աշխատանքային ռեժիմի անցումը վերահսկվում է ակտիվացիոն հատվածի սկզբնամասի ջրի նմուշառման միջոցով:

Կայանի անխափան աշխատանքը ապահովելու նպատակով՝ էլեկտրասնուցումը իրականացվելու է հիմնական և պահուստային աղբյուրներից:

Հողային աշխատանքներ, շինտեխնիկա

Շինարարության կազմակերպման նախագծային աշխատանքները կազմված են լինելու նախագծային առաջադրանքի և ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի հիմնական դրույթներին համապատասխան:

Շինարարության ընթացքում արտանետումները կլինեն տեղայնացված՝ ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում:

Գրունտի քանդման ընթացքում կառաջանա 30,151 մ³ ծավալով հողային հանույթ, որից 5,672 մ³ հետ լիցք է արվելու, իսկ 14,086 մ³ մակերեսով ողջ բուսահողը տեղափոխվելու է Սևան-Մարտունի-Գետափ ա/ճ աջ կողմում գտնվող, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողատարածք՝ ժամանակավոր պահման նպատակով՝ պահպանելով գրունտի հետ չխառնվելու և չաղտոտվելու անհրաժեշտ պայմանները, այնուհետև այն օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար: Մնացած՝ 10,373 մ³ մակերեսով հողային հանույթը կտեղափոխվի Սևան համայնքի

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

լիազոր մարմինների հետ համաձայնեցված համապատասխան տարածք: Ինչպես նաև քանդման ենթակա ինքնակամ շինությունների քանդումից կառաջանա 243 մ^3 ծավալով շին աղբ /ծածկագիրը՝ 9120060101004/, որը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինթույլտվությամբ հատկացված վայր:

Նախատեսվող գործունեության տարածքի բուսականությամբ ծածկված շերտը հիմնականում ներկայացված է Սևան-Գավառ ճանապարհի աջ կողմում ընկած տարածքում, որը համեմատաբար հարուստ է խոտածածկով, իսկ ձախ կողմում բուսածածկը համեմատաբար նոսր է, բացառություն են կազմում նախատեսվող կաթսայատան, էլեկտրաենթակայանի և ավտոկայանատեղիի տարածքները և դրանց հետնամասում գտնվող բլուրները: Այս բլուրների վրա և նախատեսվող հյուրանոցային համալիրի ու կոնֆերանս կենտրոնի միջակայքի, լճափին մոտ ընկած հատվածներում առկա են մասուրի թփեր:

Կոնֆերանս կենտրոնի տեղամասը հիմնականում բուսական ծածկույթից զուրկ է՝ ժայռային, ժայռաբեկորային և ավազային մակերեսներով:

Լճափից 3-4մ հեռավորության վրա, լողափի տարածքում առկա են թվով 4 բարդիներ, որոնք հավանաբար տնկվել են 20-30 տարի առաջ՝ տեղի բնակիչների կողմից: Հաշվետվությամբ նախատեսվում է այդ ծառերը պահպանել, սակայն ջրի մակարդակի բարձրացման հետևանքով դրանք կարող են հայտնվել ջրածածկ լինող տարածքում և կարիք կառաջանա ծառերը արմատներով հանդերձ տեղափոխելու մոտակա այլ վայր՝ նախապես համաձայնեցնելով «Սևան» ԱՊ-ի հետ:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության և նախագծի փորձաքննական գործընթացի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսում և դրանց կանխարգելման, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումների արդյունավետության դիտարկումներ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

- քանդման բեռնման աշխատանքների,
- գրունտային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվել են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր,
- տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս գտնվող համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
- ստորգետնյա կոնստրուկցիաները ջրամեկոաացնելու նպատակով օգտագործվող ջրամեկոահիչ նյութերը պետք է համապատասխանեն համապատասխան չափորոշիչներին՝ գրունտային ջրերի հետ շփման արդյունքում վտանգավոր նյութեր վերջինիս մեջ չներթափանցելու նպատակով,

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է՝

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարաններից,
- շինարարական հոսքւսջրերի համար կառուցվելու է ժամանակավոր սեպտիկ հոր,
- բիոզուգարանի և սեպտիկ հորի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաշխատանքների ավարտից հետո բիոզուգարանը տեղափոխվելու է Կապալառու կազմակերպության կողմից:

Շահագործման փուլում շենքերի ջրամատակարարման համակարգը միացվելու է մայրուղային հիմնական ջրատարին:

Ջրահեռացման համակարգը ինքնահոս եղանակով միանալու է տարածքում տեղադրվող 270խմ կեղտաջրերի մաքրման կայանին:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է հետևյալ միջոցառումների ապահովումը.

- Հյուրանոցի և կոնֆերանս կենտրոնի ստորգետնյա հարկերը ծառայելու են բնակչության համար որպես թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանական նպատակներով,
- ստորգետնյա հատվածում՝ թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք,
- Համալիրի շենքերը և շինությունները ապահովված են լինելու ավտոմատ հրշեջ ազդանշանային, հակահրդեհային, հակածխւսյին, օդափոխության համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով

Եզրափակիչ մաս. Օրենսդրությանը համապատասխան՝ հանրային լսումներն իրականացվել են Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն ազդակիր բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրում: Հանրային լսումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, Գեղարքունիքի մարզպետարանի և Սևանի համայնքապետարանի աշխատակազմերը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Իր ներդրումային ծավալով տարածաշրջանում եզակին լինելով նախատեսվող գործունեությունը ապահովելու է սոցիալական դրական ազդեցություն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
5. Կենսաբազմազանության մոնիթորինգ
6. Մաքրված կեղտաջրերի որակական պարբերական դիտարկումների իրականացում: Կայանի ելքից իրականացվելու են նմուշառումներ, որոնք պարբերաբար լաբորատոր փորձաքննության են հանձնվելու (շահագործման առաջին տարին՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, իսկ հաջորդ տարիներին՝ 3 ամիսը մեկ):

   Քանի որ տեղադրվելու է կենսաբանական մաքրման կայան և մաքրված ջրի ծավալը մեծ լինելու պատճառով հնարավոր չի լինելու կուտակել ոչ ոռոգելի սեզոնին, փորձաքննությամբ առաջադրվել է նախատեսված մաքրման կայանի համակարգում ներառել հավելյալ այլ արդի տեխնոլոգիաներով մաքրում (օզոնային մաքրում), որի արդյունքում մաքրված հոսքաջուրը կհամապատասխանի Սևանա լիճ թափվող ջրերի որակական ցուցանիշներին, (առաջին կամ երկրորդ կարգի), ապա ուղղել վերջնական մաքրումից հետո ոչ թե դրենաժային հորեր այլ Սևանա լիճ:
7. Մշտադիտարկումների միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 1 000 000 ՀՀ դրամ:

   Աշխատանքերի իրականացումը համապատասխան ժամանկացույցի նախատեսվում է 4 տարի:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Կեղտաջրերի մաքրման գործընթացն իրականացնել բացառապես մաքրման կայանի միջոցով: Մաքրման կայանի համակարգում ներառել հավելյալ այլ արդի տեխնոլոգիաներով մաքրում (օր.՝ օզոնային մաքրում), որի արդյունքում մաքրված հոսքաջուրը կհամապատասխանի Կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի № 75-Ն որոշմամբ/ Հավելված N 12.1/ սահմանված Սևանա լիճ թափվող ջրերի որակի 1-ին կամ 2-րդ կարգի ցուցանիշներին:
- Մշտադիտարկումների շրջանակում անհրաժեշտ է, որ մաքրման կայանի ելքից վերջնական մաքրված հոսքաջրերի նմուշառումները ենթարկվեն որակական փորձարկման ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում: Պարբերաբար իրականացնել մաքրման կայանի տեխնոլոգիական հսկողություն և մաքրման կառուցվածքների աշխատանքի արդյունավետության բազմակողմանի գնահատում՝ նպատակ ունենալով ժամանակին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ դրանց անխափան աշխատանքն ապահովելու համար:
- Բացառել Սևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսաածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ լվացող միջոցների/դետերգենտների օգտագործումը, որոնք կարող են պարունակել ֆոսֆատներ և առաջնորդվել՝ Կառավարության 2002 թվականի N 57 որոշմամբ սահմանված պահանջներով:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները զերծ պահել շինարարական աղբից, փոշին նվազագույնի հասցնելու նպատակով շինարարության ընթացքում ցանկապատել շինարարական հրապարակները, շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- Տարածքի կանաչապատումն իրականացնել Սևան ԱՊ-ի հետ համաձայնեցված և բացառել բազմամյա տնկիների աճեցման, բույսերի և կենդանիների նոր տեսակների ներմուծման և կլիմայավարժեցման, վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով բույսերի պաշտպանության քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիք մարզի Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրերի հարող հողատարածքներում հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված պարտադիր կատարման ենթակա պահանջների իրականացման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան